

ԳԱՅՏԱՆ ՊԱԽՂՈՍ, ի Մխիթարեան ուխտէն։ — Հնոր տարրաբանութիւն  
ի պէտո ազգային վարժարանաց» Նրկու հատոր՝ անգործարանաւոր  
և գործարանաւոր (259+156 երես) Վենետիկ, 1891 թ., զինն է ?<sup>1)</sup>։

«Հասել է արդէն ժամանակը, երբ  
աֆիզիկակի և քիմիավի գիտութիւնը  
սահմանի մի կտակ է դառել լուսա-  
ուրութեան, որպիսին էր 200 տարի  
առաջ կլասիկների գիտութիւնը  
և Ան ազգերը, որոնք ան ժամա-  
նակները կլասիկների ուսումնասի-  
ուրութեան մէջ լառաջաղիմութիւն  
սունեցան, լառաջացան իրանց ժա-  
մանակակիցներից, անպէս և մեր  
ժամանակակիցներից կը լառաջա-  
նան նրանք, որոնք կը լառաջաղի-  
մունք ընազիտութեան մէջ, որովհետեւ  
աս է մեր ժամանակի ովտը և նշանըու...  
և Մենդելէն։

Ուշախամալի է, որ մննք էլ ոռւա  
գիտնականի ասածի համեմատ ջանք  
ենք անսում փառ չը մնալ ուրիշ ազ-  
գերից, սովորել և տարածել մեր  
ազգի մէջ ան գիտութիւնները, ո-  
րոնք ժամանակիս լառաջաղիմու-  
թեան ովտը և նշաններն են, Այս  
տեսակչափի քիմիավի ձեռնարկներ  
հարկատոր են մեզանում ոչ միան  
ան հարցասէր կիսախնտելլզենա ե-  
րիտասարդներին և պատահներին,  
որոնք կը ցանկանան լրացնել իրանց  
կրթութիւնը, ալ նոդս իսկ մեր միջ-  
նակարգ դպրոցներում, ուր, եթէ  
ակադ ինչ-ինչ պատճառներով չէ  
դասաւանդում քիմիան, վաղը միւս

օրը պէտք է ստիպւած լինենք  
մտցնել, եթէ չ'ուզենանք բաւակա-  
նանալ տիրացուական կրթութիւն  
ստացած քահանաներով և ուսուցիչ-  
ներով։ Այս պատճառով չենք կարող  
մեր շնորհակալութիւնը լը լաւանել  
Հ. Պատոսին, որ փորձ է արել իւր  
կարողութեան չափ ալդ պակասը  
լրացնելուն նպաստել և որ մեր  
կարծիքով բաւարար կարելի է հա-  
մարել ձիշտ է, ալդ գործը զերծ չէ  
մի քանի արտաքին՝ ձեւական պա-  
կասութիւններից, որոնց մասին մննք  
մի քանի խօսք կ'ասենք ներքենը, բայց  
ախու ամենաճիշ նա հասկացող ու-  
սուցչի ձեռքի տակ կարող է օգտա-  
կար լինել իրեն առաջին ձեռնարկ։  
Հ. Պատոսը կարողացել է գտնել  
ան չափը, որ առարկավի հետ նոր  
ծանօթացողին չէ ձանձրացնում փակ-  
տերի բազմութեամբ (և լաճախ ան-  
կապութեամբ) և ոչ էլ հակառակ  
ծալրահեղութեան մէջն է ընկել, որ  
չէ տալիս նրան կարեոր պաշար,  
թէօրիավի հիմունքները ընթանելու  
համար նա բերել և բացարկել է  
իւր ձեռնարկում միան կարեոր և  
լաճախ պատահող երմութները նիւ-  
թի դասաւորութիւնը նոյնպէս, ընդ-  
հանրապէս առած, լաջող է (չնչին  
բացառութիւններով)։ Ի դէպս մի

<sup>1)</sup> Կողմանկի կերպով էմայանք, որ Զ հատորը Յ քըանկ արժէ, Ճանապար-  
հածախքը (1 ֆու.) ըերեւ տւողի հաշւին, Աէտք է կոստովանել որ էյտն է։

հարց Հ. Պաւղոսին. ինչու նա տարրերի ուսումնախրավթիւնը դասաւորելով Մենդելէսի բնական դասերի համամատ, մի խօսք էլ չէ ասում ոչ Մենդելէսի և ոչ նորա հոչակառոր պարբերականութեան թէօրիավի մասին. Մենդելէսի թէօրիան, բացի գույտ գիտնական արժէքից, մանկավարժական նշանակութիւն էլ ունի, որովհետև օգնում է սովորողին հեշտութեամբ հասկանալ և մտքումը պահել տարրերի շատ լատկութիւնները, որ առանց արդ թէօրիավի անկապ են մնում և զժւարութեամբ մտքում պահելի».

Մենք վերև ասացինք, որ նիւթի դասաւորութիւնը ընդհանրապէս լաջող է, բայց պատահում են և, ըստ մեզ, անկաջող տեղեր. օր. իզուր է աշխատել հեղինակը հէնց առաջին գլուխում առանց օրինակների և բացարութիւնների իրար փառելոց շարել մի շարք չոր ու ցամաք որոշումներ (որքենութեան) ինչպէս պարզ և բաղադրեալ մարմինների, տարրարանական և բնաբանական (քիմիական և ֆիզիկական) երևութիւնների, բաղադրութեան և խառնուրդի և ազն և ալին... Աղդ որոշումները առանց օրինակների, ոչինչ չը բացարելով սովորողին, կարող են իրանց սքուլաստիհականութեամբ միան ձանձրութիւն պատճառել նորան և նախապաշարել քիմիավի դէմ—իրը մի անհետաքրքիր գիտութեան դէմ:

Հ. Պաւղոսի աշխատութեան ամենամեծ պակասութիւնը, մեր կարծիքով, նորա ամեն ինչի հավկական մեւ տալու չափաղանց ցանկութիւններ. օրինակների հարիւրներով կաշելի

է բերել բայց մենք բաւականանում ենք մի քանիսով միայն, որոնք բաւական են մեր միտքը պարզելու համար. Molybdène խօսքը չը պահելու համար, նա սորա փոխարէն գործ է ածում արծիճ, Plomb'ի համար միայն կապարը լատկացնելով, Կ'նչպէս է կարող արծիճը Molybdène նշանակել քանի որ մինչև ակժմ թէ յոզդվրդական լեզում և թէ գրականութեան մէջ նա մի որոշ նշանակութիւն է ունեցել=Plomb'ր Հավազեան բառարանը, որի հեղինակութիւնները ալս հարցում անվիճելի կարող է համարել ուղղակի տալիս է արծիճ տես կապար Barium—թարգմանւած է կլոռոն, Jode—մանիչ Bromme—ժահին, chloroform—քլորակերպ, և էլ հարիւրաւոր դորանց նման բառեր Գուցէ աղդ խօսքերից մի քանիսը մինչև անդամ անքան լաջող լինեն կազմւած, որ ապագալում հայ զիտնական գրականութեան մէջ քաղաքացիութեան իրաւունք ստանան, բայց պարզ է, որ գրանց մնեց մասը «Մօքրություն»-ական ուղղութեան ծնունդ են և «Մօքրություն»ի վիճակն են ունենալու Աղդ տեսակ բառեր ամենաշատը՝ կարծվի էր փակագծում դնել եւրոպականի կողքին—և ոչ ամլի:

«Տարրաբանութեան» հեղինակը ալսքանով չը բաւականանալով ամելի հեռու է գնացել. նա իրըն քիմիական նշանացուցեր ընդունել է տարրերի նոր թիսած անունների առաջին տառերը. օրինակ անագ=Անս աժու տառը ընդունել է Բուռի նշանացուց (ըստ նորա ժահին), «կը»

թարիումի նշանացոլցն է (ըստ նորա կըսում) և ակապէս մնացածները, ինքն ըստ ինքեան հասկանալի է աղղքան եւրոպակախութիւնան անտեղիութիւնը և անկարմարութիւնը, Եթէ վազը մի ալ հեղինակ սրարիումը ոչ սկզբունք թարգմանի՝ ալլ ասենք, սծանրուկու, — բռուց՝ ոչ ժահին — ալլ սգարշահոսու և ալլն և ալլն, և կամ եթէ մի ուրիշը դուրս գայ որ օրինական ցանկութիւն ունենալ ալլ տեսակ խօսքերի համար եւրոպական անունները պահել և ոչ սորա ու նորա ըստ քմաց թիւած բառերը — ալն ժամանակ մենք ամեն մի տարրի համար բազմաթիւ նշանացոլցներ կ'ունենանք, որ ինարիչ, ցանկալի բան չէ, թողոր փոքր ի շատէ լուսաւոր ազգերը մի անդամ ընդ միշտ ընդունել են իրեն տարրերի նշանացոլցեր նրանց լատիներէն անունների լատինական սկրինատառերը, որ մեծ լարմարութիւն են ներկալացնում, 1) նրանց անփոխիւնելութեան պատճառով և 2) ալն պատճառով, որ եթէ դուք մի քանի եւրոպական լիզուներ անքան գիտեք, որ ալլ լեզուներով կարդացածներդ հասկանում էք, հեշտութեամբ կարող էք ալլ լեզուներով դրած քիմիական դրամածքներ կարդացաւ ուր ամենաբարդ նշանացոլցերն ձեզ չեն դժւարացնիլ, որովհետեւ նրանք նողնն են բոլոր լիզուներում, ուրեմն և ձեզ ծանօթի,

Մեղ թւում է, թէ ալս տեսակետից ուռաների ցուց տած ճանապարհով մենք պէտք է ընթանանք Վերջիններս մի ասսնեակ համարմարաններ ունեն, բազմաթիւ բարձ-

րագոյն մասնագիտական դպրոցներ, հարիւրներով միջնակարգ դպրոցներ, ուր քիմիա է դասախոսում, վերջապէս նրանք Մենդելէնով և Բուտլըրովի նման հոչակաւոր քիմիկուներ ունեն, և ախու ամենալինիւ զորդն ածում լատինական նշանացոլցեր և ոչ սլավոնական կամ ռուսական, Դժւար չէ երեակալել որքան կը դժւարանար օտար լիզուներով քիմիական գրածքներ կարդալը, եթէ բուլոր ազգերի քիմիկոսներն էլ հետեւին չ. Պաւզոսի օրինակին, նամանաւանդ որ, ինչպէս վերը տեսանք, ամեն մի հեղինակ իւր սեպհական նշանացոլցերը կ'ունենար, ակապէս կամ անպէս թարգմանելով այս կամ այն տարրի անունը, և բնչ կարիք վերջապէս լինական պարիսպներով շրջապատմել եւրոպական ազդեցութիւնից զերծ մնալու համար, այն էլ զուտ դիտութեան ասպարիզում Մենք միան զարմանում ենք, որ Հ. Պաւզոսը, աղդքան օտարավախ լինելով, զործ է ածում արարական թւանշաններ թող ամեն իւն ինչ կատարել եալու համար, թւերն էլ հավական տառերով նշանակիր, ալն ժամանակ մի ալսպիսի լինական ճաշկիի աղիւսակ կը տանալինք, — կշուն = կշուն (ամինքն Բարիում = Բթ = 137) և ակապէս երեակալեցէք մնացածները...

Վերջացնելով մեր ասելիքը, չենք կարող լուսութեան տալ Հ. Պաւզոսի ընդունած տարօրինուկ տառաղարձութիւնը, նա օտար խօսքերը հաւերէն զրելիս ալս ինչ կամ այն ինչ տառի զործածութիւնը քէֆի բան է

համարտում, երբեմն մեր արևելեան տառադարձութիւնը ընդունելով և երբեմն արևմտեան, թրինակներ զրքի ամեն երեսում կարելի է գտնել. տառաջ բերենք մի քանիսը. եւրոպական grame բառը նա մեղպէս զրում է «Գրամ», իսկ carat՝ գրում է գրադ, Անհականալի հակասութիւն. ըստ նորա դուրս է գալիս «ր ց=ց և ս=ս ուրեմն ց=c (?)». Նա զրում է Գալ (Gallium), Բիսմութ (Bismuth), Դիդիմ (Didyme), —բայց կազ (gaz), Լըպլան (Leblane), Տիկոն և Բթի (Dulong et Petit), Վենետիկ (Venedig).

Դիրքը տպւած է գեղեցիկ տառերով և զարդարած սիրուն նկարներով, բայց զերծ չէ խոշոր սիսալներից, որոնք վակել չեն մի ձեռն արկի, օրինակ՝ առաջին մասում երես 41 ներքեց 5-երրորդ տողում կարգում ենք. ու սառողը 4<sup>o</sup> ջրէ տասն (!!) անգամ աւելի տարածոց կը գրաւէն.

Բազմաթիւ են և զուտ տպագրական սիսալները, որ նունագէս անտեղի են ձեռն արկում. եր. 50 վ. 11 տ. տպւած է. «1 տարածոնք ջրածնի և 3 տարածոցք բորակածնի՝ կուտան և ավել 1 և 3 թմբի տեղը հարկաւոր է փոխել Երես 58 ն. 6 տողում կոտորակի համարիչի և լաւտարարի տեղերն էլ փոխելու է. Մի ավ տեղ (եր. 95, 6-դ տ. ներքեցից) «Թթւածնի» խօսքի տեղ աջածնին է տպւած և ավել, ինչպէս տեսնում էք, իրեն ձեռնարկի, շատ անխնամ է սրբագրած և ալեռու ամենանիւ հեղինակը ամելորդ է համարել կցել իւր զրքին վրիպակների ցանկը. Թող ների մեջ Հ. Պալոսը, որ համարձակում ենք խորհուրդ տալ նորան գոնէ ալժմ, քանի որ դեռ ուշ չէ, կազմել և կցել իւր «Տարրաբանութեան» մեր վերն իշշած ցանկը.

Մ. Տ.-Ա.

## Եոր ստացւած գրքեր

1) «ԵՂԵՇԵԼ» պատմութիւն Վարդանանց ըստ Արձեացեաց օրինակիունախօթութիւններով և հալուսերէն բառագրքով ի լուս ընծակց ուսուց. Լազարեան ճեմարանի Արևելեան լեզւաց Խ. Յովհաննիսեանց, Մոսկու, տպար. Մկրտիչ Բարխուդարեանցի, 1892 թ., զինն է 1 ր. 50 կոպէկ.

2) ՄԱԼՈՒՄԵԱՆ, Խ.—«ԽՐԻՄԵԱՆ», Կենսագրական տեսութիւն (պատկերով). Թիֆլիս, Կովկասեան կառավարչապետի տպարան, 1892 թ. զինն է 40 կոպէկ:

- ԵԶԵԴՐԻՆ. — 1) «Խոչալիստ ծածան»  
 2) «Խմատոռն ծանծադրուկ»  
 3) «Խիղճը կորաւու»
- |    |                        |
|----|------------------------|
| 1) | թարգ. Մ. Ղազարեանց,    |
| 2) | Հրատ. հայոց Հր. Ընկ.   |
| 3) | Թիֆ. տպ. Ռոտ. գ. 15 կ. |